ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 73

«14» 07 2020 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Ալբերտի Աֆանդյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պաշտոնից ազատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնում նշանակելու ու նույն վարչության պետի պարտականությունների կատարումը վարչության պետի տեղակալ Վազգեն Հարությունյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 13.07.2020թ. N 226-Ա և 227-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի ու գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Ա.Աֆանդյանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության վարույթների, փաստաթղթերի ու գույքի հանձնում, իսկ Վ.Հարությունյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Մելքոնյան Դավիթ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Խաչատրյան Նարեկ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով

Մարտիրոսյան Հայկ -	Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ
Քոչարյան Նարինե -	Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ
Խալաթյան Նաիրա -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ
Բաղդասարյան Լևոն -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Սաֆարյան Կարինե -	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի հուլիսի 30-ը:

Ա.ԴԱՎԹՅԱՆ